



Ք Ա Ր Ո Ձ

ՊԱՐԳԵՎ ԱՐԵՂԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԵՆՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Խոսված Մայր Տաճարում Ս. Ստեփանոսի տոնին)

«Եթէ ո՛ր կամի գալ զկե՛ր իմ, ուսացէ զանձն իւր և բարձրէ զխաչ իւր և եկեացէ զկե՛ր իմ»:

(ՄԱՐԿ., Ը 34)



րիստոսի աշակերտ լինելու առաջին ու հիմնական պայմաններից մեկը անձնուրացութիւնն է, նվիրվածութիւնը քրիստոնէական սուրբ իղեալներէ՝ անձնուրացութեան հասնելու աստիճանով: Ոչ ոք մեծ չի եղել առանց զոհողութեան: Քրիստոնէութեան առաջին դարում գետի պես հոսել է հավատացյալների արյունը: «Արիւն մարտիրոսաց՝ հիմն եկեղեցւոյ»: Նրանք հանուն քրիստոնէական կրոնի «Տալածեցան, քարկոծեցան, սղոցեցան...», բայց հասին աւետեաց»:

Հին, հեթանոս աշխարհի դեմ պայքարելիս առաջին մեծ սրբերը բացի իրենց հավատից և անձնուրացութիւնից, ուրիշ ոչինչ չունեին: Աշխարհք նրանց հալածեց, բայց դարերը խոնարհեցին նրանց սուրբ նահատակութեան առաջ: Եվ առաջին մարդը, որ հանուն քրիստոնէական սուրբ կրոնի զոհվեց, դա Ստեփանոս սարկավազն էր, որի նահատակութեան տոնն է կատարում այսօր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին:

Գործք Առաքելոցում Ս. Ստեփանոսի մասին պատմվում է, որ նա նոր ընտրված յոթ սարկավազներից մեկն էր, «այլ լի հաւատով և զօրութեամբ», որին հրեաները ձերբակալեցին և կանգնեցրին հրեական դատարանի առաջ, որպէս Մովսիսական կրոնի արհա-

մարհողի: Նա անվեհեր քաջութեամբ, խորը հավատով պաշտպանեց իր կրոնական համոզմունքների ճշտութիւնը, հռչակեց Հիսուսի մեսիականութիւնը, դատապարտեց հրեաների կրոնական մոլեռանդութիւնն ու կուրսութեամբ, և քրիստոնէական սուրբ կրոնի ճշմարտութիւնների համար նահատակվեց քարկոծութեամբ, իր մահվան մեջ ևս աղոթելով իր սպանողների համար: Այս իսկ պատճառով նա կոչվեց «նախապկա և առաջին մարտիրոս»: Նա էլ վերցրեց իր խաչը և գնաց Հիսուսի հետևից:

Ս. Ստեփանոսի նահատակութիւնից հետո սկսվեց ուժեղ հալածանք քրիստոնէականների դեմ: «Քրիստոնէաները՝ առլուծներին», — գրուում էին հռոմեական կայսրութեան բոլոր հրապարակների վրա, և հազարներ նահատակվում էին, մինչ ամբանում և աճում էր Եկեղեցին Սամարիայում, Միջերկրական ծովի ավազանում, Փյունիկիայում, Կիպրոսում, Անտիոքում, Ասորիքում, Հայաստանում, Հռոմում:

Սուրբ Ստեփանոսի այս սուրբ տոնին մենք չենք կարող շփոթել մեր այն բազմաթիւ մարտիրոսներին, որոնք հանուն քրիստոնէական, հանուն Հայրենիքի զոհվել են ու սրբաբացվել մեր ժողովրդի, մեր Եկեղեցու կողմից:

Մեր ժողովրդի պատմությունը մի սովորական պատմություն չէ, այլ մի մարտիրոսագրություն հանուն քրիստոնեական կրոնի և Հայրենիքի, հանուն առաջադիմության:

Մեր Հայրենիքի հողի վրա, յուրաքանչյուր քարի տակ մի-մի նահատակ է հանգչում: Այդ քարերի լեզուն ավելի շատ բան կպատմի մեզ մեր սուրբ նահատակների կրած անասելի տառապանքների, շարշարանքների և նահատականության մասին: Դարերի և ժամանակների ամեհի ալիքն է անցել մեր Հայրենիքի վրայով:

Հանուն քրիստոնեության՝ ինչե՛ր չի կրել հայ հավատացյալը: Նա իր կյանքի գնով պահպանել է իր հայրենի սրբությունները, հավատի հուրը, հայրենասիրության բոցավառ զգացմունքը, իր հոյակապ մշակույթը, լեզուն:

«Հազիվ թե, բացի հայերից, կա աշխարհի վրա մի ուրիշ ժողովուրդ, որ այդպիսի տոկունությամբ և համերաշխությամբ իր ուսերի վրա կրեր քրիստոնեությունը և պաշտպաներ այն օտարադավանների ամեն տեսակի ստրկացումից», — գրում է ուս պատմաբան Դուրբավինը:

Քրիստոնեական լույսի մեջ թրծվեց հայության հավատավոր ոգին, դարձավ անխոցելի գալիք բոլոր արհավիրքների և ջրհեղեղների դիմաց:

Հիշենք Վարդանանց մեծ պատերազմում ընկած նահատակներին: Բայց այդ հերոսամարտը միակը չէ: Հարուստ է հայ ժողովրդի պատմությունը հանուն հայ հավատի, հանուն հայրենի սրբությունների մղված ազատագրական, պայքարի հերոսական դրվագներով:

«Մահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ՝ մահ», — ասում է մեր ոսկեծղիկ պատմագիր Եղիշեն:

Մեր նահատակների մահը իմացված մահ է. նրանք քրիստոնեության խաչը կրծքներին, հայրենասիրության զգացումը սրտներին, գուրս են եկել իրենց ժամանակի տգիտության, խավարի և բռնության դեմ ու ընկել որպես հազիվական զինվորներ, բայց չեն մեռել, որովհետև նրանց հիշատակը հետնորդների սրտում մնացել է անմար ու գործը շարունակվել սերունդների կողմից:

Թո՛ղ օրհնեալ լինի նրանց հիշատակը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

